

**ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՎՊՀ ՌԵԿՏՈՐ

Գ.Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

<<____>> _____ 2015թ.

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 2

<<27>> _____02_____ 2015թ.

"Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարանի" պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) որակի ապահովման կենտրոնի կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է որակի ապահովման կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կազմակերպական և մեթոդական հիմքը և նրա հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև Համալսարանի ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը մշակված է համաձայն ՀՀ գործող օրենսդրության, կրթության ոլորտում նորմատիվ կարգավորող փաստաթղթերի և Ինստիտուտ կանոնադրության:

1.2. Կենտրոնը Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է և իրականացնում է իր գործառույթները ամենամյա աշխատանքային և հեռանկարային ծրագրով: Կենտրոնի աշխատանքներն իրականացվում են Համալսարանի ռեկտորի հետ սերտ համագործակցությամբ:

1.3. Կենտրոնի աշխատանքի ղեկավարումը կատարում է կենտրոնի ղեկավարը, որը նշանակվում և ազատվում է աշխատանքից ռեկտորի հրամանով՝ ըստ գործող աշխատանքային օրենսդրության:

1.4. Կենտրոնը համագործակցում է Համալսարանի ստորաբաժանումների հետ:

2. Կենտրոնի հիմնական խնդիրներն ու գործառույթները

Կենտրոնի հիմնական խնդիրները և գործառույթներն են՝

2.1. մշակել որակի ապահովման համակարգի ներդրման և կատարելագործման միջոցառումների պլան,

2.2. նախագծել միջազգային որակի ապահովման չափորոշիչներին համապատասխանող իրավական նորմատիվ փաստաթղթերի համակարգ,

2.3. սահմանել կրթության որակի ապահովման համակարգի ցուցանիշերը և նրանց մոնիթորինգի կարգը,

2.4. պատրաստել նյութեր ներքին աուդիտի արդյունքների հիման վրա, կազմակերպել և համակարգել Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում որակի ապահովման ներդրման արդյունավետությունը,

2.5. կրթության ոլորտում որակի ապահովման քաղաքականություն իրականացնող ստորաբաժանումների ղեկավարներին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ աշխատանքային գործընթացների համակարգման, դրանց որակի չափանիշերի և բնութագրերի որոշման, չափման մեթոդների և տեղեկատվության հավաքագրման հարցերում,

2.6. ֆակուլտետների, ամբիոնների, պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքները համաձայնեցել կրթության որակի մշտադիտարկման և որակի ապահովման համակարգի կատարելագործմանն ուղղված վարչական որոշումներին,

2.7. զարգացնել համագործակցություն այլ բուհերի որակի ապահովման կենտրոնների հետ, որը ենթադրում է փորձի փոխանակում, որակի ապահովման խնդիրների վերաբերյալ ուսումնամեթոդական և գործնական գիտաժողովներին մասնակցություն,

2.8. աջակցել Համալսարանի լիցենզավորման, հավաստագրման և հավատարմագրման հարցերի վերաբերյալ աշխատանքներին,

2.9. համալսարանի որակի ապահովման և կառավարման գործառույթներն իրականացվում են Համալսարանի ֆակուլտետների, ամբիոնների, գիտական և մասնագիտական կաբինետների հետ համագործակցության միջոցով,

2.9. համալսարանի ղեկավարությանը ներկայացնել տեղեկատվություն որակի ապահովման համակարգի ներդրման արդյունքների և կրթության որակի կատարելագործման առաջարկների վերաբերյալ:

3. Կենտրոնի կառուցվածքը և կազմը

3.1 Կենտրոնի կազմը ձևավորվում է Համալսարանի ռեկտորի կողմից, կենտրոնի ղեկավարի ներկայացմամբ՝ համաձայն ՀՀ գործող աշխատանքային օրենսդրության:

3.2. Կենտրոնի հաստիքային աշխատակիցները՝

- ՈԱԿ – ի ղեկավար,
- ավագ մասնագետ,
- մասնագետ,
- մոնիթորինգի և վերլուծության մասնագետ,
- ՈԱԿ-ի կաբինետի լաբորանտ:

3.3. Կենտրոնի ղեկավարը համակարգում և ուղղորդում է աշխատախմբերի աշխատանքը: Նրա հրահանգները պարտադիր են Կենտրոնի աշխատակիցների համար:

3.4. Ավագ մասնագետը կազմակերպում և կենտրոնացնում է կենտրոնի աշխատանքը և ապահովում կապը ստորաբաժանումների որակի ապահովման աշխատախմբերի հետ, համակարգում աշխատախմբերի աշխատանքները, մասնակցում մոնիթորինգի գործընթացին, ներկայացնում առաջարկություններ կրթական գործունեության և որակի կառավարման գործընթացների բարելավման ուղղությամբ, ինչպես նաև վարում համապատասխան գործավարություն:

3.4. Մասնագետը մշակում է աուդիտի մեխանիզմները, կազմակերպում և իրականացնում աուդիտի գործընթացը, որակի ապահովման համակարգի ներդրման նպատակով իրականացնում վերապատրաստումներ, խորհրդատվություններ, ինչպես նաև ներկայացնում հաշվետվություն և առաջարկներ, մասնակցում կենտրոնի աշխատանքներին, վարում գործավարություն:

3.5. Մոնիթորինգի և վերլուծության մասնագետը մշակում է մշտադիտարկման ընթացակարգեր, ընտրում դրա իրականացման գործիքները, կազմակերպում և իրականացնում գործընթացը, ինչպես նաև ներկայացնում հաշվետվություն և առաջարկներ:

3.6. ՈԱԿ-ի կաբինետի լաբորանտը կազմակերպում է կաբինետի աշխատանքը, նախապատրաստում վերապատրաստումներ, մասնակցում կենտրոնի գործունեությանը, վարում գործավարություն:

3.7. Կենտրոնի աշխատակիցները իրենց գործառնությունները կատարում են աշխատանքային պայմանագրի համաձայն:

3.8. Կենտրոնի աշխատակիցներն ընդունվում են աշխատանքի՝ ըստ համապատասխան պաշտոնի նկարագրի:

4. Կենտրոնի աշխատանքի ուղղությունները

Կենտրոնն աշխատանքներ է տանում հետևյալ ուղղություններով.

4.1. Կազմակերպչական գործունեություն՝ կրթության որակի ապահովման, աուդիտի և մշտադիտարկման գործընթացների մշակում կազմակերպում և ներդրում:

4.2. Կառավարչական գործունեություն՝ Համալսարանում որակի ապահովման ուղղությամբ համապատասխան որոշումների նախագծերի և մեթոդական ցուցումների մշակում:

4.3. Վերլուծական գործունեություն՝ Համալսարանում որակի ապահովման համակարգի արդյունավետության և այլ բուհերում ներդրված կրթության որակի ապահովման լավագույն մոդելների համեմատական վերլուծություն:

4.4. Մեթոդական գործունեություն՝ կրթության որակի ապահովման ոլորտում պրոֆեսորադասախոսական կազմի և ներքին աուդիտորների վերապատրաստում:

4.5. Համակարգող գործունեություն՝ որակի ապահովման գործընթացի մասնակիցների աշխատանքային խմբի գործունեության համակարգում:

4.6. Խորհրդատվական գործունեություն՝ կառուցվածքային ստորաբաժանումներին որակի ապահովման համակարգի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:

4.7. Նորարարական գործունեություն՝ միջազգային որակի չափորիշիչների պահանջներին համապատասխանող կրթության որակի ապահովման համակարգի ժամանակակից նմուշօրինակի ներդրում:

4.8. Շուկայագիտական գործունեություն՝ Համալսարանի շրջանավարտների պատրաստվածության որակի վերաբերյալ սպառողի պահանջների վերհանում:

4.9. Տեղեկատվական գործունեություն՝ կրթության որակի ապահովման ոլորտում Կենտրոնի գործունեության արդյունքների և Համալսարանի ձեռքբերումների վերաբերյալ հասարակությանը, Համալսարանի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական կազմին տեղեկատվության տրամադրում:

4.10. Միջբուհական համագործակցություն՝ որակի ապահովման բնագավառում այլ բուհերի հետ փորձի փոխանակում:

5. Կենտրոնի գործունեության հիմնական սկզբունքներն ու ռազմավարությունը

Համալսարանի որակի ապահովման համակարգը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

5.1. Համալսարանը պատասխանատվություն է կրում իր կողմից տրամադրվող կրթության որակի համար:

5.2 Համալսարանը երաշխավորում է պետական կրթական չափորոշիչների բոլոր պահանջների կատարումը և այն կրթական ծրագրերի պահանջների իրականացումը, որոնց համար դրանք մշակվել են:

5.3. Համալսարանն իր բոլոր ուսանողներին տրամադրում է անհրաժեշտ պայմաններ պետական և ներքին կրթական չափորոշիչներին համապատասխան կրթական ծրագրերի յուրացման համար՝ ներառյալ որակավորված պրոֆեսորադասախոսական կազմ, գրադարանային և տեղեկատվական սպասարկում, սոցիալական աջակցություն:

5.4. Համալսարանն իր վրա է վերցնում պատասխանատվություն իրականացնելու կրթության որակի շարունակական բարելավում՝ որակի ապահովման մոնիթորինգի և այդ մակարդակի բարձրացմանն ուղղված գործողությունների իրականացման համար:

5.5. Համալսարանում կրթության որակի ապահովման գործընթացը համապատասխանում է այն պահանջներին և սկզբունքներին, որոնք ձևակերպված են ENQA-ի («Եվրոպայի տարածքում բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների համար ստեղծված չափորոշիչներ և ուղղորդիչներ») կողմից:

5.6 Որակի ապահովման և ներքին չափորոշիչների ձևավորման գործընթացին ակտիվորեն ներգրավվում են Համալսարանի ուսանողները:

5.7 Համալսարանի ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում որակի ապահովման խնդիրներին՝ նպաստելով պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մոտ հարգալից վերաբերմունքի ձևավորմանը Համալսարանի կողմից տրվող շնորհների, վկայականների և այլ փաստաթղթերի նկատմամբ:

Չափորոշիչներ

6. Կրթության որակի ապահովման ծրագրեր

6.1. Կրթական ծրագրերի բովանդակությունը, դրանց իրականացման պայմանների, ուսումը հաջողությամբ ավարտած անձանց պատրաստվածության մակարդակի նկատմամբ պահանջները որոշվում են համաձայն համապատասխան պետական չափորոշիչների:

6.2. Բարձրագույն կամ լրացուցիչ մասնագիտական կրթություն տրամադրելու դեպքում գործում են բարձրագույն մասնագիտական կրթության վերաբերյալ պետական կրթական չափորոշիչները:

6.3. Չափորոշիչների հիման վրա Համալսարանը մշակում է կրթական ծրագրեր, որոնք ներառում են ուսումնական պլանները, առարկայական փաթեթներ և նյութեր, որոնք ապահովում են ուսանողների մասնագիտական պատրաստվածության որակը: Կրթական ծրագրերը մշակվում են աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

7.Ներքին աուդիտ և մշտադիտարկում

7.1.Համալսարանում կրթական գործունեության վերահսկման համար անցկացվում է ներքին աուդիտ՝ ինքնավերլուծության միջոցով՝ ըստ կանոնակարգի և ընթացակարգերի:

7.2. Համալսարանի կրթական գործունեության վերլուծության արդյունքները զեկուցվում են գիտխորհրդում, տեղեկացվում պրոֆեսորադասախոսական անձնակազմին, ըստ վերլուծության արդյունքների՝ կայացվում որոշումներ:

7.3.Մշտադիտարկումն իրականացվում է պարբերաբար և ներառում է նախանշված ցուցանիշերի վերաբերյալ տվյալների համակարգված հավաքագրում, վերլուծություն և բարելավմանն ուղղված խորհրդատվություն՝ ըստ կանոնակարգի և ընթացակարգերի:

8.Հասարակայնությանը տեղեկատվության տրամադրում

8.1.Գործելով աշխատաշուկայում և կրթական ծառայությունների ոլորտում՝ Կենտրոնը հրապարակում է տեղեկատվություն իրականացվող կրթական ծրագրերի մասին:

8.2. Համալսարանը, գիտակցելով իր պատասխանատվությունը հասարակության առջև, պարբերաբար ներկայացնում է հաշվետվություն իր կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ:

8.3. Տեղեկատվությունը հրապարակվում է Համալսարանի պաշտոնական կայքում, տեղական մամուլում, գրքույկներում, տեղեկատուներում՝ նախատեսված դիմորդների և գործատուների համար:

9. Կենտրոնի փոխհարաբերությունները Համալսարանի ստորաբաժանումների և աշխատակիցների հետ

9.1. Արդյունավետ համագործակցություն Համալսարանի ղեկավարների հետ՝ որակի ապահովման մշակույթի ձևավորման նպատակով:

9.2. Որակի ապահովման հիմնախնդիրների վերաբերյալ մատուցած կրթական և տեղեկատվական ծառայությունների վարձատրման հարցերով՝ Համալսարանի հաշվապահության հետ:

9.3. Կենտրոնի գործունեությանն առնչվող համապատասխան փաստաթղթերի մշակման հարցերով՝ Համալսարանի իրավաբանի հետ:

9.4. Որակի ապահովման վերաբերյալ գրականության ֆոնդի ստեղծման հարցերով՝ գրադարանի հետ:

9.5. Համագործակցություն կրթության որակի ապահովման համակարգի ներդրման հարցերով՝ ուսումնական վարչության հետ: